

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
2-ՐԴ ԵՎ ԲԱՐՁՐ ԿՈՒՐՍԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՒՐՍԻՑ-ԿՈՒՐՍ  
ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ  
ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

1. Ուսանողների կուրսից-կուրս փոխադրման հրամանները տրվում են 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների հիման վրա, յուրաքնչյուր տարվա օգոստոսի 27-ից 30-ը ընկած ժամանակահատվածում: Նշված ժամկետներից հետո ակադեմիական պարտքերը մարած ուսանողների հրամանգրումը կատարվում է ոչ ուշ, քան սեպտեմբերի 22-ը:
2. Ուսանողներին կրթաթոշակ նշանակվում է կուրսից-կուրս փոխադրման հրամանը արձակելուց անմիջապես հետո՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա փետրվարի 1-ը ընկած ժամանակահատվածի համար: Սեպտեմբերի 1-ից 22-ը կուրսից-կուրս փոխադրման հրամանը տրված ուսանողներին կրթաթոշակ նշանակվում է հոկտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա փետրվարի 1-ը: Հարգելի պատճառներով, նշված ժամկետներում, ակադեմիական պարտքերը չմարած ուսանողների կուրսից-կուրս փոխադրման և կրթաթոշակի նշանակման հարցերը քննարկվում են ռեկտորատում, անհատական կարգով:
3. Եթե ձմեռային քննաշրջանում (դեկտեմբեր-փետրվար ամիսներին) կրթաթոշակ ստացող ուսանողը որևէ առարկայի քննությունից գնահատվում է «անբավարար», «չստուգված» կամ անհարգելի չի ներկայանում քննությանը, դեկանի առաջարկությամբ հաջորդ ամսից զրկվում է կրթաթոշակից: Անկախ ակադեմիական պարտքի (երի) մարման ժամկետներից այդ կարգի ուսանողներին կրթաթոշակ նշանակելու հարցը քննարկվում է դեկանատում և ձևակերպվում հրամանով հաջորդ ամսվա սկզբից:
4. Առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներով, այն ուսանողներին ովքեր հունվարի 31-ի դրությամբ չունեն ակադեմիական պարտքեր նշանակվում է կրթաթոշակ փետրվարի 1-ից մինչև օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

Այն ուսանողներին, ում քննաշրջանը կամ ակադեմիական պարտքերի մարումը ավարտվում է փետրվար ամսին, կրթաթոշակ նշանակվում է փետրվարի 1-ից օգոստոսի 31-ը:

Ավարտական կուրսերի ուսանողներին կրթաթոշակ նշանակվում է փետրվարի 1-ից մինչև ավարտելը:

Ծանոթություն՝ եթե ուսումնական գործընթացի կազմակերպման գրաֆիկով տվյալ մասնագիտության որևէ կուրսի քննաշրջանը ընդգրկում է նաև փետրվար ամիսը, ապա այդ խմբերի ուսանողները կրթաթոշակ ստանում են նաև այդ ամսվա համար (այդ մասին տրվում է լրացուցիչ հրաման): «Անբավարար» գնահատականի, «Չստուգվածի» կամ անհարգելի պատճառներով քննությանը չներկայանալու դեպքում ուսանողը հաջորդ ամսից զրկվում է կրթաթոշակից:

5. Գարնանային քննաշրջանում (մայիս-հունիս-հուլիս ամիսներին) որևէ առարկայից «անբավարար», «չստուգված» կամ անհարգելի պատճառներով քննությանը չներկայացված ուսանողը հաջորդ ամսվանից զրկվում է կրթաթոշակից: Անկախ ակադեմիական պարտքերի մարման ժամկետից այդ կարգի ուսանողին կրթաթոշակ նշանակելու հարցը քննարկվում է սեպտեմբերին՝ կուրսից-կուրս փոխադրման հրամանը արձակելուց հետո

Քննարկվել և երաշխավորվել է հաստատման համալսարանի գիտական խորհրդի 2011թ դեկտեմբերի 20-ի նիստում (արձանագրություն №5)